

**Բանկերի գործարար շրջանառության սովորույթը՝ կապված SWIFT համակարգի միջոցով ԱՄՆ դոլարով դրամական միջոցների փոխանցման ժամանակ գործող կարգի հետ**



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները: Անհրաժեշտության դեպքում գործարար շրջանառության սովորույթը կիրառելու նպատակով Հաշտարարը նպատակահարմար է գտել բանկերից ճշտել տվյալ հարցի վերաբերյալ համակարգում գործող գործարար շրջանառության սովորույթը:

Համաձայն ներկայացված պահանջի՝ Հաճախորդին Շվեյցարական UBS բանկի միջոցով՝ SWIFT համակարգով, փոխանցվել է 1,000 ԱՄՆ դոլար գումար: Ըստ փոխանցող կողմի՝ փոխանցման հետ կապված ամբողջ ծախսերը կատարվել են իր կողմից, իսկ SWIFT հաղորդագրության 71A տողում նշվել է OUR (Հաշտարարի գրասենյակ ներկայացվել է UBS բանկի կողմից տրամադրված SWIFT հաղորդագրությունը, որտեղ 71A տողում առկա է OUR նշումը): Հաճախորդը մոտեցել է ՀՀ-ում գործող առևտրային բանկ՝ փոխանցված գումարը ստանալու նպատակով, սակայն բանկը վերջինիս տրամադրել է 988 ԱՄՆ դոլար գումար՝ պատճառաբանելով, որ մնացած 12 ԱՄՆ դոլար գումարը գանձվել է որպես միջնորդավճար, քանի որ SWIFT հաղորդագրության 71A տողում նշված է SHA:

Հաճախորդը դիմել է Բանկ՝ պահանջելով ետ վերադարձնել իրենից անհիմն գանձված գումարը, քանի որ փոխանցող կողմն ամբողջությամբ վճարել է փոխանցման հետ կապված ծախսերը՝ որպես հիմք տրամադրելով նաև UBS բանկի կողմից տրամադրված գրությունն այն մասին, որ փոխանցված գումարի միջնորդավճարը գանձվել է փոխանցողից:

ՀՀ տարածքում գործող բանկերում գործարար շրջանառության սովորույթը բացահայտելու նպատակով Հաշտարարը հարցում է ուղարկել ՀՀ-ում գործող 19 առևտրային բանկերի՝ խնդրելով ներկայացնել կարծիք վերոնշյալ իրավիճակի վերաբերյալ և պարզաբանել՝ *ի՞նչ կարգ է գործում բանկում, երբ փոխանցողի կողմից տրված SWIFT համակարգով իրականացված գումարի փոխանցման մանրամասների 71A տողում առկա է OUR նշումը, իսկ բանկի կողմից SWIFT համակարգով ստացված մանրամասների 71A*

*տողում առկա է SHA նշումը, և ի նչ քայլեր է ձեռնարկում բանկը նմանօրինակ դեպքերում՝ Հաճախորդի շահերը պաշտպանելու նպատակով:*

Խնդրի կապակցությամբ Հաշտարարի գրասենյակը ստացել է ՀՀ-ում գործող 14 բանկերի կողմից տրված բացատրություններն ու պարզաբանումները, ինչի արդյունքում ձևավորվել է գործարար շրջանառության սովորույթ, քանի որ գրեթե բոլոր բանկերը ներկայացրել են նույն դիրքորոշումը: Այսպես.

- 12 բանկեր նշել են, որ OUR տարբերակի դեպքում վճարողի բանկի միջնորդավճարները, ինչպես նաև բոլոր միջնորդ բանկերի և ստացողի բանկի ծախսերը կրում է վճարողը, իսկ SHA տարբերակի դեպքում՝ վճարողի բանկի միջնորդավճարները կրում է վճարողը, իսկ բոլոր միջնորդ բանկերի և ստացող բանկի ծախսերը կրում է շահառուն՝ միջնորդավճարները գանձվում են փոխանցվող գումարից: Միջնորդավճարների գանձման նման տարբերակը կիրառվում է արտարժույթով հաշվարկների դեպքում՝ բացառությամբ ԱՄՆ դոլարով փոխանցումների: Ամերիկյան բանկերը, ստանալով OUR ծախսերի տարբերակով MT103 հաղորդագրությունը SWIFT համակարգով, տվյալ փոխանցման կատարման համար նախատեսված միջնորդավճարը գանձում են ուղարկող բանկի թղթակցային հաշվից: Այնուհետև ամերիկյան բանկը վճարման հանձնարարականը առանց գանձումների ուղարկում է միջնորդ բանկին՝ SWIFT MT103 հաղորդագրության մեջ փոփոխելով OUR գանձման տարբերակը SHA տարբերակով, ինչը պայմանավորված է ամերիկյան քլիրինգային Fedwire և CHIPS համակարգերի առանձնահատկություններով:

Բանկերը նաև նշել են, որ սովորաբար խորհրդատվության կարգով առաջարկում են իրենց հաճախորդներին ԱՄՆ դոլարով ստացվող փոխանցումների դեպքում նախապես զգուշացնել իրենց գումար փոխանցողներին՝ գումարը փոխանցելիս ընտրել OUR միջնորդավճարի երաշխավորված (Guaranteed OUR) տարբերակը, որի դեպքում շահառուն փոխանցված գումարը ստանում է ամբողջությամբ:

Բանկերից մեկը նաև նշել է, որ խնդրո առարկա հանդիսացող դեպքերում բանկը փորձում է պարզաբանել, թե գանձման ինչ տարբերակով է ուղարկվել գումարը՝ OUR թե Guaranteed OUR: Եթե գումարը փոխանցվել է Guaranteed OUR տարբերակով, սակայն միջնորդ բանկերի կողմից միջնորդավճարներ են գանձվել, ապա բանկը դիմում է ուղարկող բանկին փոխհատուցում ստանալու համար, ընդ որում՝ փոխհատուցման դեպքեր արձանագրվել են:

- Հարցմանը մասնակցած 1 բանկ նշել է, որ նման խնդրի երբևէ չի առնչվել, սակայն նման իրավիճակ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի համակարգում առկա տվյալներին, այլ ոչ թե հաճախորդի կողմից ներկայացվածին:

- Իսկ մեկ այլ բանկ ներկայացրել է բոլորովին այլ դիրքորոշում՝ նշելով, որ ստացող բանկի համար հաճախորդի անունով ստացված փոխանցման գումարի չափը որոշելու համար հիմք է հանդիսանում MT103 տեսակի SWIFT հաղորդագրության միայն 32A տողը, այլ ոչ թե 71A տողը: 32A տողում արտացոլված գումարը առանց որևէ պահումների բանկի կողմից կրեդիտագրվում է հաճախորդի հաշվին, անկախ այն հանգամանքից, թե ինչ է նշված հաղորդագրության 71A տողում:

Այսպիսով, Հաշտարարն արձանագրում է, որ SWIFT համակարգի միջոցով ԱՄՆ դոլարով դրամական փոխանցումներ իրականացնելիս շահառուի բանկը պատասխանատվություն չի կրում SWIFT MT103 հաղորդագրության մեջ առկա տվյալների փոփոխության համար, ինչը կարող է հանգեցնել ստացողի կողմից փոխանցված գումարը ոչ ամբողջական ստանալուն՝ պայմանավորված միջնորդ բանկի/բանկերի կամ ստացողի բանկի կողմից սահմանված սակագների գանձմամբ: